

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»
փակ բաժնետիրական ընկերություն

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ



ACBA-CREDIT AGRICOLE BANK

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՅ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Թողարկող) 2017թ. միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2017թ. երկրորդ կիսամյակի միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվում է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն:

<u>Հակոբ Անդրեասյան</u> <small>(անուն, ազգանուն)</small>	<u>Գլխավոր գործադիր տնօրենի</u> <small>(պաշտոն)</small>	 <small>(ստորագրություն)</small>	<u>28.02.2018թ</u> <small>(ամսաթիվ)</small>
<u>Ստյոպա Զաքինյան</u> <small>(անուն, ազգանուն)</small>	<u>Ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ</u> <small>(պաշտոն)</small>	 <small>(ստորագրություն)</small>	<u>28.02.2018թ</u> <small>(ամսաթիվ)</small>
<u>Արմեն Հակոբյան</u> <small>(անուն, ազգանուն)</small>	<u>Գլխավոր հաշվապահ</u> <small>(պաշտոն)</small>	 <small>(ստորագրություն)</small>	<u>28.02.2018թ</u> <small>(ամսաթիվ)</small>



**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ
ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՄԻՋԱՆԿԱՅԼ ԶԵԿՈՒՅՑԸ**

Հաշվեկշռային հիմնական ցուցանիշներ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ակտիվները կազմել են 311 մլրդ ՀՀ դրամ՝ 2017թ.-ի երկրորդ կիսամյակի ընթացքում նվազելով 6.7 մլրդ դրամով, սակայն տարվա ընթացքում աճելով 9.8%-ով (կամ 27.8 մլրդ դրամով):

Բանկի ակտիվների գերակշիռ մասը բաժին է ընկնում հաճախորդներին տրամադրված վարկերին՝ 31.12.17թ.-ի վերջի դրությամբ կազմելով ակտիվների 60.2%: Բանկի վարկային պորտֆելը տարվա ընթացքում աճել է 12.1 մլրդ ՀՀ դրամով (կամ 6.3%-ով)՝ 31.12.17թ կազմելով 204 մլրդ ՀՀ դրամ: Տարվա ընթացքում Բանկը էականորեն ավելացրել է ՀՀ դրամով վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր պորտֆելում: Այսպես, հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Բանկի կողմից ՀՀ դրամով տրամադրված վարկերի կշիռը ընդհանուր պորտֆելում կազմել է 63%: Նշենք, որ նույն ցուցանիշը 30.06.17թ.-ի դրությամբ կազմել է 57%, իսկ 31.12.16թ.-ի դրությամբ՝ 54% (ՀՀ դրամով պորտֆելի տարեկան աճը կազմել է 24 մլրդ ՀՀ դրամ):

Բանկի դրամական միջոցները (կանխիկ դրամական միջոցներ, մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում և այլ թղթակից բանկերում) 31.12.17թ.-ի դրությամբ կազմել են 70.3 մլրդ ՀՀ դրամ, որը կազմում է Բանկի ընդհանուր ակտիվների 23%-ը:

Բանկի ներդրումները պարտատոմսերում կազմել են 20.7 մլրդ ՀՀ դրամ՝ տարեսկզբի 26.3 մլրդ դրամի փոխարեն: 31.12.17թ.-ի դրությամբ նշված պորտֆելի 70%-ը կազմել են արտարժութային պարտատոմսերը:

Ակտիվների աճին զուգընթաց տարվա ընթացքում 10.6%-ով աճել են նաև Բանկի պարտավորությունները՝ 31.12.17թ.-ին կազմելով 250.8 մլրդ ՀՀ դրամ:

2017թ.-ի ընթացքում էականորեն աճել են հաճախորդների ցպահանջ և ժամկետային ավանդները: Այսպես, 31.12.17թ.-ի դրությամբ նշված պորտֆելը կազմել է 159 մլրդ ՀՀ դրամ՝ միջանկյալ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում աճելով 13%-ով, իսկ տարվա ընթացքում՝ 39%-ով: Ընդ որում Բանկը տարվա ընթացքում գրեթե կրկնապատկել է հաճախորդների տեղական արժույթով ցպահանջ և ժամկետային ավանդների պորտֆելը՝ նշված պորտֆելի կշիռը ընդհանուր պորտֆելում հասցնելով ավելի քան 40%-ի: Ինչ վերաբերում է ավանդների կառուցվածքին ըստ ժամկետայնության՝ ժամկետային ավանդները կազմել են ավանդային պորտֆելի 76%-ը, իսկ ցպահանջ ավանդները՝ 24%-ը:

Միաժամանակ ՀՀ Կենտրոնական բանկի և Կառավարության, բանկերի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները տարվա ընթացքում նվազել են 24%-ով՝ 31.12.17թ.-ին կազմելով 82.8 մլրդ ՀՀ դրամ: Նշենք նաև, որ այս պարտավորությունները 2017թ.-ի առաջին կիսամյակում փոքր-ինչ աճել էին (աճը՝ 5%), իսկ երկրորդ կիսամյակի ընթացքում նվազել 27%-ով՝ պայմանավորված Բանկի կողմից պլանային մարումներով և իրացվելիության կառավարման տեսանկյունից նոր ռեսուրսների ներգրաման անհրաժեշտության բացակայությամբ:

Հաճախորդներին գումարների կուտակման այլընտրանքային պրոդուկտ առաջարկելու, ինչպես նաև ՀՀ-ում կապիտալի շուկայի զարգացմանն իր մասնակցությունն ունենալու նպատակով՝ Բանկը 2017թ.-ին առաջին անգամ

թողարկել է պարտատոմսեր: Առաջին թողարկումը տեղի է ունեցել 2017թ.-ի օգոստոսին՝ 5 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 2.5 տարի ժամկետայնությամբ և 5.5% արժեկտրոնային եկամտաբերությամբ պարտատոմսերի թողարկմամբ: Հաջողությամբ տեղաբաշխելով նշված ամբողջ պորտֆելը՝ Բանկը դեկտեմբեր ամսին թողարկել է տեղական արժույթով, 2 տարի ժամկետայնությամբ, 1 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսեր՝ 9.2% արժեկտրոնային եկամտաբերությամբ: Արժեթղթերի թողարկումը հետագա տարիներին ևս կկրի շարունակական բնույթ:

31.12.17թ.-ի դրությամբ Բանկի կապիտալը կազմել է 60.2 մլրդ ՀՀ դրամ՝ տարվա ընթացքում աճելով 3.6 մլրդ ՀՀ դրամով (միջանյալ հաշվետու ժամանակաշրջանում Բանկի կապիտալը աճել է 1.5 մլրդ ՀՀ դրամով): Կապիտալի աճը պայմանավորված է եղել տարվա ընթացքում ձևավորված շահույթով: 2017թ.-ին Բանկը վճարեց բաժնետերերին 1 մլրդ ՀՀ դրամ գումարի շահութաբաժին:

Նշենք, որ 2017թ.-ի ընթացքում փոքր-ինչ փոփոխության է ենթարկվել Բանկի բաժնետիրական կառուցվածքը: 2017թ.-ին Բանկի բաժնետերեր՝ ՀՀ տասը մարզերի ԳՓՄՄ-ները, միավորվելով ստեղծեցին «ԱԿԲԱ Ֆեդերացիա» փակ բաժնետիրական ընկերությունը, որը դարձավ Բանկի խոշորագույն բաժնետեր՝ 72% բաժնեմասով:

Եկամուտների և ծախսերի հիմնական ցուցանիշներ

Բանկի զուտ տոկոսային եկամուտները դիտարկվող տարվա համար կազմել են 17.1 մլրդ ՀՀ դրամ:

Բանկը տարվա ընթացքում մշտապես ունեցել է իրացվելության ավելցուկ, որը հիմնականում ներդրել է կարճաժամկետ գործիքների մեջ: 2017թ.-ի ընթացքում

ներդրումային գործառնություններից տոկոսային եկամուտը կազմել է 2.8 մլրդ ՀՀ դրամ:

Միաժամանակ, ստացված զուտ կոմիսիոն վճարները կազմել են 2.3 մլրդ ՀՀ դրամ, նախորդ տարվա 1.6 մլրդ ՀՀ դրամի փոխարեն: Աճը հիմնականում պայմանավորված է եղել վճարային քարտերով գործառնություններից ստացված կոմիսիոն եկամուտների աճով: Նշենք նաև, որ Բանկը տարվա ընթացքում ավելի քան 13 000 հատով ավելացրել է գործող քարտերի քանակը՝ 31.12.17թ.-ի դրությամբ հասցնելով տրամադրված քարտերի քանակը ավելի քան 219 000-ի:

Բանկը տարվա ընթացքում աճեցրել է նաև առևտրային գործառնություններից ստացված եկամուտները՝ հասցնելով այն 1.6 մլրդ ՀՀ դրամի: Նշենք, որ նույն ցուցանիշը երկրորդ կիսամյակի համար կազմել է ավելի քան 1.0 մլրդ ՀՀ դրամ՝ գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի եկամուտները ավելի քան 30%-ով:

Արդյունքում Բանկի գործառնական եկամուտները տարվա ընթացքում աճել են 363 մլն ՀՀ դրամով (2%-ով)՝ կազմելով 24 մլրդ ՀՀ դրամ:

Ընդհանուր վարչական և այլ գործառնական ծախսերը տարվա ընթացքում աճել են 7.5%-ով՝ կազմելով 14.8 մլրդ ՀՀ դրամ: Բանկը տարվա ընթացքում ավելացրել է նաև աշխատակիցների քանակը՝ տարեվերջի դրությամբ հասցնելով այն 1348-ի:

Բանկի զուտ մասհանումները 2017թ.-ին կազմել են 2.4 մլրդ ՀՀ դրամ, որից 75%-ը բաժին է ընկնում վարկերի և հաճախորդների փոխատվությունների գծով զուտ մասհանումներին: Նշենք, որ նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածում զուտ մասհանումները կազմել են 7.2 մլրդ ՀՀ դրամ:

31.12.17թ.-ի դրությամբ չաշխատող վարկերը կազմել են բանկի վարկային պորտֆելի 10.6%: Համեմատության համար նշենք, որ 2017թ.-ի ընթացքում

ցուցանիշը բարելավվել է 3.3 տոկոսային կետով, իսկ միայն երկրորդ կիսամյակի ընթացքում՝ 1.6 տոկոսային կետով:

Արդյունքում, 2017թ.-ին Բանկն ունեցել է 5 490 825 հազ. ՀՀ դրամի զուտ շահույթ: Բանկի ակտիվների շահութաբերությունը 2017թ.-ի տվյալներով կազմել է 1.8%, իսկ կապիտալի շահութաբերությունը՝ 9.4%:

Մրցակցային դիրքի վերլուծություն

2017թ.-ի վերջի դրությամբ ՀՀ-ում գործել են 17 առևտրային բանկեր: Կապիտալի նվազագույն շեմի ապահովման նպատակով՝ 2016թ.-ի ընթացքում բանկային համակարգում տեղի ունեցան 4 միաձուլումներ: 2017թ.-ի ընթացքում նոր միաձուլումներ կամ կլանումներ տեղի չեն ունեցել:

2017թ.-ի ընթացքում բանկային համակարգը շարունակել է հիմնական ֆինանսական ցուցանիշների գծով իր դրական դինամիկան՝ տարվա ընթացքում արձանագրելով ակտիվների 6.7%, վարկային պորտֆելի 3.5%, հաճախորդների նկատմամբ պարտավորությունների 9.9% և կապիտալի 5.8% աճ: Նույն ժամանակահատվածում, Բանկի ակտիվները, վարկային ներդրումները, հաճախորդների նկատմամբ պարտավորությունները և կապիտալը աճել են համապատասխանաբար 9.8%-ով, 5.5%-ով, 27.6%-ով և 6.4%-ով: Ինչպես երևում է, Բանկը տարվա ընթացքում վերոնշյալ ցուցանիշների գծով արձանագրել է ավելի արագ աճ:

Ստորև ներկայացված են Բանկի հիմնական մրցակցային առավելությունները:

- Տոկոսային և ոչ տոկոսային բարձր եկամուտների գեներացման կարողություններ (արտահայտված տոկոսային մարժայով, ինչպես նաև գործառնական եկամուտներ/ակտիվներ հարաբերակցությամբ):

Բանկի տոկոսային մարժան հաշվետու տարվա տվյալներով կազմել է 5.6%՝ ավելի քան երկու անգամ գերազանցելով ակտիվներով խոշոր 3 բանկերի միջին ցուցանիշը: 2017թ.-ի համար գործառնական եկամուտներ/ակտիվներ հարաբերակցությունը կազմել է 8%՝ կրկին արձանագրելով կրկնակի ավելի բարձր մակարդակ, քան ակտիվներով խոշոր 3 բանկերի միջին ցուցանիշն է:

- Վարկային և ավանդային պորտֆելների առավել ցածր դոլարիզացիա:

Չնայած նրան, որ Հայաստանում դոլարայնացման մակարդակը 2017թ.-ի ընթացքում նվազել է, այնուամենայնիվ այն շարունակում է մնալ բարձր: Այսպես, 2017թ.-ի ընթացքում ռեզիդենտների արտարժույթային վարկերի և ռեզիդենտների ընդհանուր վարկերի հարաբերակցությունը նվազել է 3.6 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 61.4%, իսկ ռեզիդենտների արտարժույթային ավանդների և ռեզիդենտների ընդհանուր ավանդների հարաբերակցությունը նվազել է 4.6 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 55.3%¹: Տարեվերջի դրությամբ, Բանկի կողմից արտարժույթով տրամադրված վարկերի կշիռը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 37%, իսկ արտարժույթային ավանդային պորտֆելի կշիռը՝ ընդհանուր ավանդային պորտֆելի 59%-ը:

- Կապիտալիզացիայի բարձր մակարդակ:

31.12.17թ.-ի դրությամբ բանկը կապիտալի մեծությամբ զբաղեցրել է 3-րդ տեղը, սակայն կապիտալի համարժեքության ցուցանիշով բանկը գերազանցել է իր բոլոր հիմնական մրցակիցներին՝ տարեվերջին արձանագրելով 19.4% կապիտալի համարժեքության ցուցանիշ:

¹ ՀՀ ԿԲ տեղեկագիր, Դեկտեմբեր 2017

Վարկանիշ

2017 թվականի մայիսին, հեղինակավոր Ֆիթչ վարկանիշային գործակալությունը (Fitch Ratings) Բանկին շնորհել է «Երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի» B+ վարկանիշ՝ կայուն հեռանկարով (long-term Issuer Default Rating IDR): Համաձայն գործակալության կողմից հրապարակված զեկույցի՝ Բանկն արժանացել է նման գնահատականի հաշվի առնելով ներքին ֆինանսական կենսունակությունը, Բանկի բացարձակ առաջատար դիրքը գյուղատնտեսության ֆինանսավորման ոլորտում, ենթակառուցվածքային հագեցվածությունը, այդ թվում՝ մասնաճյուղերի առկայությունը հանրապետության բոլոր մարզերում, ինչպես նաև իրացվելիության բարձր մակարդակը:

Fitch Ratings գործակալության կողմից ստացված վարկանիշային գնահատականը հնարավոր ամենաբարձրն է ՀՀ-ում գործունեություն ծավալող ընկերությունների համար, և այն վերահաստատում է Բանկի առաջատար դիրքը և թափանցիկ ֆինանսական կառույց լինելու փաստը:

Նշենք նաև, որ 2017թ.-ի նոյեմբերին, Fitch Ratings գործակալությունը, Բանկի կողմից այս տարի թողարկված 5 մլն ԱՄՆ դոլարի պարտատոմսերին ևս շնորհել է «B+» երկարաժամկետ վարկանիշ, որը հավասարեցված է բանկին շնորհված երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի վարկանիշին:

Հետագա զարգացման նկարագիր

Առաջիկա տարիների համար համար Բանկը կանխատեսում է ապահովել կայուն աճ իր հիմնական ֆինանսական ցուցանիշների գծով: Բանկի ծառայությունները կթիրախավորվեն հաճախորդների երեք հիմնական սեգմենտների (Գյուղատնտեսական, Մանրածախ, ՓՄՁ և կորպորատիվ) վրա: Ակտիվների աճը կզուգակցի վարկային պորտֆելի շարունական աճով: Ունենալով ինչպես դրամային, այպես էլ արտարժութային ռեսուրսների զգալի պաշար՝ Բանկը շարունակելու է ակտիվ վարկավումը: Մասնակցելով ՀՀ կառավարության՝ գյուղատնտեսությանը աջակցման ծրագրերին, Բանկը կտրամադրի գյուղատնտեսական վարկեր հիմնականում ՀՀ մարզերում միջին և խոշոր գյուղացիական տնտեսություններին, գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ և վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններին, ինչպես նաև Բանկը իր սեփական միջոցներով կշարունակի վարկավորել ինչպես մանր, այնպես էլ միջին և խոշոր գյուղացիական տնտեսություններին:

Բանկի գործունեության կարևորագույն ուղղություններից է նաև հիմնական ավանդների կայուն բազայի ընդլայնումը: Բանկը կփորձի ավելացնել ընդհանուր ավանդների բազան Բանկի պարտավորություններում:

Միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետազոտությունների արդյունքները հանգում են այն եզրակացությանը, որ առաջիկա տարիների ընթացքում նորագույն տեխնոլոգիաների արագ զարգացումը, դեմոգրաֆիկ փոփոխությունները, հաճախորդների նոր տեսակի պահանջմունքների ձևավորումը և կարգավորող մարմինների վերահսկողական պահանջների խստացումը բանկային համակարգը կենթարկի լուրջ փոփոխությունների:

Վերոնշյալ գործոնները էական ազդեցություն կունենան նաև հայաստանյան բանկային շուկայի վրա: Սույն գործոններով պայմանավորված՝

մարտահրավերներին դիմակայելու և դրանց շնորհիվ մրցակցային առավելություն ստանալու համար Բանկի կողմից նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները՝

- Սպասարկման ցանցի օպտիմալացում՝ հեռահար սպասարկման հնարավորությունների ընդլայնման նպատակով: Սպասարկման ցանցի օպտիմալացումը պայմանավորված կլինի մասնաճյուղային, բանկոմատային ցանցի և հատկապես ինքնասպասարկման ուղիների վերազինմամբ և զարգացմամբ՝ հաճախորդներին առաջարկվող բանկային ծառայություններից օգտվելու հասանելիության և հարմարավետության բարձրացման նպատակով: Նշված փոփոխությունները կբարձրացնեն Բանկի գործունեության արդյունավետությունը և կբարելավեն հաճախորդների կողմից բանկային ծառայություններից օգտվելու հարմարավետությունը:
- Ավելի հաճախորդակենտրոն բիզնես մոդելի ձևավորում, որը ենթադրում է հաճախորդների հետ հաղորդակցման գործընթացի բարելավում, ինչպես նաև ֆինանսաբանկային շուկայի ծառայությունների և սպասարկման նկատմամբ հաճախորդների կարիքների ավելի խորը ուսումնասիրություն և այդ կարիքներին բավարարող թիրախային լուծումների առաջարկում: Այս փոփոխությունների արդյունքում ակնկալվում է ստանալ հաճախորդների կողմից բարձրացված խնդիրներին ավելի արագ արձագանքում, հետադարձ կապի ուժեղացում և հաճախորդների փորձի բարելավում:
- Բիզնես և գործառնական մոդելի պարզեցումը հաջորդ կարևոր քայլերից մեկն է, որը ընկերությունը դարձնելով ավելի ճկուն, հնարավորություն կտա արագ արձագանքել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայի փոփոխություններին և մարտահրավերներին, ինչն իր հերթին կտա հնարավորություն բավարարել հաճախորդների/շուկայի պահանջներն ու ապահովել մրցակցային առավելություն:

- Հաճախորդների սեգմենտավորման և թիրախավորման մեխանիզմների առավել էֆեկտիվ կիրառման արդյունքում՝ կիրականացվեն ճիշտ վերադիր և խաչադիր վաճառքներ:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

2017թ. արտաքին միջավայրում նկատվել է տնտեսական աճի տեմպի արագացման միտում: Մասնավորապես, ՌԴ-ում, որը հանդիսանում է ՀՀ կարևոր առևտրային գործընկեր և աշխատանքային միգրանտներ ընդունող երկիր, 2017թ. արձանագրվել է մոտ 1.5% ՀՆԱ աճ և գործազրկության տեմպերի կրճատման միտում, ինչը կանխատեսվում է, որ կպահպանվի նաև հաջորդ տարիներին: Որոշակի դրական և կայունացման միտում է նկատվել նաև նավթի շուկայում, և կանխատեսվում է, որ կայուն տեմպը կպահպանվի նաև հաջորդ տարիներին ընթացքում: Նշված դրական մակրոտնտեսական տեղեկանքներ հիման վրա, Բանկի կողմից կանխատեսվում են ոչ առևտրային նպատակով դրամական փոխանցումների ներհոսքի աճ:

2017թ. ՀՀ-ում դրսևորվել է տնտեսական աճի միտում, որի համար խթան են հանդիսացել ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության ընդլայնումը, Կառավարության կողմից ներդրումների խթանմանը նպաստող քաղաքականությունը, ՌԴ-ից դրամական փոխանցումների ներհոսքի աճը, ինչպես նաև արտաքին պահանջարկի աստիճանաբար վերականգնումը: Երկնիշ աճ է արձանագրվել արդյունաբերության, ծառայությունների, առևտրի շրջանառության և արտահանման ոլորտներում: Մակրոտնտեսական ցուցանիշների բարելավումը դրական է անդրադարձել ՀՀ բանկային համակարգի վրա՝ նպաստելով նախորդ տարվա նկատմամբ չաշխատող ակտիվների տեսակարար կշռի 0.97 տոկոսային կետով նվազմանը (4.99%): 2017թ. ընթացքում արձանագրվել է 1.0% գնաճ՝ 2016 թվականի -1.4% համեմատ: Համաձայն ՀՀ ԿԲ գնահատումների՝ գնաճային միտումները կպահպանվեն նաև 2018 թվականին՝ մոտենալով 4% թիրախային մակարդակին:

ՌԻՍԿԵՐԻ ԱՄՓՈՓ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2017թ. ընդհանուր գործունեության արդյունքում Բանկը գործել է սահմանված ռիսկի ախորժակի սահմաններում: Մասնավորապես, կապիտալի համարժեքության նորմատիվի փաստացի արժեքը զգալիորեն գերազանցել է ինչպես ներքին, այնպես էլ ՀՀ ԿԲ կողմից սահմանված նվազագույն շեմը: Բանկի ռիսկով կշռված ակտիվների գերակշիռ մասի աղբյուր է հանդիսանում վարկային ռիսկը, ինչը պայմանավորված է գործունեության հիմնական ուղղվածությամբ: Նույնիսկ սթրես-թեստի վատատեսական սցենարում Բանկը չի խախտել Կապիտալի համարժեքության ներքին և ՀՀ ԿԲ նորմատիվային նվազագույն մեծությունը և ունի կապիտալի զգալի պաշար տնտեսական ցնցումներին դիմակայելու համար:

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Բանկի խնդրահարույց վարկերի (համաձայն ՀՀ ԿԲ կարգի հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի դասերով դասակարգված վարկեր) ցուցանիշը 2017թ.-ի վերջի դրությամբ կազմել է 4.72%, որը ցածր է ՀՀ բանկային համակարգի միջին ցուցանիշից (4.99%): Ընդ որում, մակրոտնտեսական դրական ցուցանիշների և բանկի հետևողական քաղաքականության արդյունքում հաջողվել է զգալիորեն բարելավել վարկային պորտֆելի որակը՝ չաշխատող վարկերի ցուցանիշը կրճատելով 3.65%-ով: Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումների մակարդակն ըստ տնտեսության ճյուղերի և խոշորագույն հաճախորդների գտնվել է սահմանված նպատակակետերի շրջաններում: 2017թ. իրականացված սթրես թեստերի արդյունքներով վարկային ռիսկի մեծությունը գտնվել է ընդունելի մակարդակում՝ հաշվի առնելով սթրեսային իրավիճակի հնարավոր ազդեցության և վերջինիս ի հայտ գալու հավանականության համադրությունը:

Բանկի վարկային քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է եղել վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի բարձրացումը: Համապատասխան քայլեր

են ձեռնարկվել վարկերի տրամադրման որոշումների կայացման ավտոմատացված համակարգերի ստեղծման և վարկունակության գնահատման ներքին սքորինգային համակարգերի բարելավման ուղղությամբ:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿ

Շուկայական ռիսկի հայեցակարգում հիմնական ռիսկի աղբյուրներն են արտարժութային փոխարժեքների և տոկոսադրույքների տատանողականությունը:

2017թ.-ի ընթացքում ՀՀ ԿԲ-ն շարունակել է պահպանել խթանող դրամավարկային քաղաքականությունը: Տարեսկզբին վերաֆինանսավորման տոկոսադրույքի 0.25% կրճատումից հետո ՀՀ ԿԲ-ն այն պահել է կայուն 6%-ի սահմաններում: Շուկայական տոկոսադրույքները դրսևորել են նվազման միտում, ինչը պայմանավորված է եղել նաև ՀՀ բանկային համակարգում ավելցուկային իրացվելիության առկայությամբ, ինչպես նաև հաճախորդների ներգրավման ուղղությամբ մրցակցության բարձր տեմպերով: Միջազգային տոկոսադրույքի շուկայում, մասնավորապես LIBOR-ի գծով, դրսևորվել է հակառակ տենդենցը՝ տարեվերջին նկատվել է տոկոսադրույքների կայուն աճի միտում, ինչը հանդիսացել է տոկոսադրույքի ռիսկի առաջացման հիմնական գործոնը: Նշված ազդեցությունը Բանկի տոկոսային ծախսերի ավելացման վրա գնահատվել է փոքր՝ պայմանավորված LIBOR-ով ներգրավված պարտավորությունների ցածր կշռով:

Արտարժութային շուկայում ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքն ունեցել է կայուն միտում՝ դրսևորելով բավականին ցածր տատանողականություն, որը վերջին տարիների ընթացքում եղել է ամենացածրը, ի տարբերություն այլ արտարժույթների, մասնավորապես՝ եվրոյի և ՌԴ ռուբլու, որոնք դրսևորել են նախորդ տարիների համեմատ առավել ցածր, սակայն ԱՄՆ դոլարի նկատմամբ առավել բարձր տարեկան տատանողականություն:

Ավելորդ ռիսկերից խուսափելու նպատակով՝ եվրո և ՌԴ ռուբլի արտարժույթներով դիրքերը հիմնականում պահվել են փակ: ԱՄՆ դոլարով արտահայտված դիրքը եղել է երկար, սակայն բավականին ցածր ընդունելի առավելագույն մակարդակից:

2017թ. ընթացքում ընդհանուր առմամբ արտարժույթի վերագնահատումից գրանցվել է օգուտ, սակայն պարբերաբար իրականացվող սթրեսային սցենարների արդյունքում արտարժույթի վերագնահատումից հնարավոր կորուստները չեն գերազանցել սահմանված ռիսկի ախորժակի մեծությունները:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Բանկում գործում է գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ, որի հիմնական բաղադրիչներից մեկն է հանդիսանում մշտական հսկողության համակարգը:

Ներկայումս Բանկի համար էական գործառնական ռիսկերի շարքին է դասվում տեղեկատվական անվտանգության ռիսկը: Թվային տեխնոլոգիաների զարգացման ներկայիս պայմաններում՝ տեղեկատվական անվտանգությունը հանդիսանում է ֆինանսաբանկային համակարգի առաջնային մարտահրավերներից մեկը: Բանկը էական ներդրումներ է իրականացնում տեղեկատվական համակարգերի անվտանգության ապահովման համար՝ ներդնելով ժամանակակից անվտանգության համակարգեր, պարբերաբար իրականացվում են Բանկի տեղեկատվական համակարգերի ներթափանցման թեսթեր՝ համագործակցելով աշխարհի առաջատար կազմակերպությունների հետ: Հարկ է նշել նաև, որ Բանկը տարիներ առաջ ներդրել է ISO27001 ստանդարտին համապատասխան տեղեկատվական անվտանգության համակարգ, որը հավաստված է համապատասխան սերտիֆիկատով և իրականացվում է ստանդարտի պահանջներին համապատասխանության պարբերական վերահաստատում արտաքին աուդիտի կողմից:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

2017թ. բանկային համակարգում առկա է եղել իրացվելիության բարձր մակարդակ, ինչը պայմանավորված է եղել ՀՀ ԿԲ կողմից բանկային գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր կապիտալի նվազագույն չափի ավելացմամբ, որն ուժի մեջ է մտել 2017թ.-ի հունվարի մեկից: Բանկը ապահովում է իրացվելիության բարձր և հուսալի մակարդակ, ինչը արտացոլվում է իրացվելիության նորմատիվների՝ ՀՀ ԿԲ սահմանած սահմանաչափերից զգալիորեն բարձր ցուցանիշով: Նշված ավելցուկային իրացվելիությանը նպաստել են հաճախորդներից ներգրավված միջոցների աճը: Մասնավորապես, 39% աճ է արձանագրվել ներգրավված ժամկետային ավանդների գծով, այն էլ տոկոսադրույքների նվազման պարագայում, ինչը վկայում է Բանկի նկատմամբ բարձր վստահության մասին: Հարկ է նշել, որ ընդհանուր պարտավորությունների կազմում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը կազմում է մոտ 50%:

Իրացվելիության աղբյուրների դիվերսիֆիկացման նկատառումներից ելնելով՝ Բանկը միջոցներ է ներգրավվում նաև միջազգային ֆինանսական կառույցներից, ինչպիսիք են ՎՋԵԲ-ը, FMO-ն, BSTDB-ն, EFSE-ն և այլն: Նշված կառույցներից ներգրավված միջոցների տեսակարար կշիռը ընդհանուր պարտավորություններում կազմում է մոտ 25%:

Ավելցուկային իրացվելիության պաշարներն ուղղվում են ցածր ռիսկային ներդրումային գործառնությունների իրականացմանը, մասնավորապես պետական պարտատոմսերում ներդրումների իրականացում, միջբանկային վարկերի տրամադրում, հակադարձ ռեպո գործարքների իրականացում և այլն: Բանկի ներդրումային պորտֆելում մեծ տեսակարար կշիռ են կազմում առավել բարձր իրացվելիություն ունեցող ՀՀ պետական պարտատոմսերը՝ կազմելով պարտատոմսերի պորտֆելի մոտ 97.0%:

Իրացվելիության ռիսկի կառավարման հայեցակարգում պարբերաբար իրականացվող սթրես թեստերի արդյունքներով Բանկի իրացվելիության մակարդակը գնահատվել է բավարար նույնիսկ վատագույն սցենարների պարագայում:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

Բանկի վարկային քաղաքականության հիմքում դրված է շրջակա միջավայրի և սոցիալական պատասխանատվության հայեցակարգը, որի շրջանակներում արգելվում է շրջակա միջավայրի վրա չափազանց բարձր ազդեցություն ունեցող գործունեության և նախաձեռնի ֆինանսավորումը:

Բանկը հետևողականորեն ուսումնասիրում և քայլեր է ձեռնարկում շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի բացահայտման և մոնիթորինգի ուղղությամբ: Վարկավորման հայտերն ուսումնասիրելուն զուգահեռ Բանկի կողմից իրականացվում է նաև վարկառուի գործունեության՝ սոցիալական և շրջակա միջավայրի (ՍՇՄ) պահպանման նվազագույն պահանջներին համապատասխանության ստուգում: ՍՇՄ բացառությունների ցանկում ներառված գործառնությունների ֆինանսավորումը արգելվում է: Վարկառուի գործունեությանը տրվում է համապատասխան ՍՇՄ ռիսկի դաս, ինչը և ենթարկվում է պարբերական մոնիթորինգի: Միաժամանակ, Բանկը ակտիվորեն համագործակցում է ՄՖԿ-ի և ՎԶԵԲ-ի հետ՝ հետևելով վերջիններիս կողմից սահմանված բոլոր պահանջներին:

Վարկային պորտֆելում ՍՇՄ բարձր ռիսկ պարունակող վարկերի մասնաբաժինը տարեվերջի դրությամբ կազմել է 6%:

Ենթահավելված 6

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

Հավելված 6

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշմամբ

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՏԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ձև թիվ 6)**

«31» Դեկտեմբերի 2017թ.

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ք.Երևան Արամի 82-84
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան 01.10.17-31.12.17	Ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) 01.01.17-31.12.17	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան 01.10.16-31.12.16	Նախորդ ֆինանսական տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) 01.01.16-31.12.16
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	7,732,846	32,065,635	7,604,321	31,617,621
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(3,891,139)	(14,969,141)	(3,645,004)	(13,943,736)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		3,841,707	17,096,495	3,959,317	17,673,885
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	1,215,893	3,905,102	933,612	3,247,973
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(385,131)	(1,647,715)	(418,547)	(1,640,339)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		830,762	2,257,387	515,066	1,607,634
Եկամուտ շահարձիմներից		3,197	8,550	-	3,765
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	8	607,773	1,646,367	470,751	1,273,301
Այլ գործառնական եկամուտներ	8.1	598,791	3,037,567	988,938	3,124,450
Գործառնական եկամուտներ		5,882,230	24,046,366	5,934,072	23,683,035
Զուտ մասհանումների ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	9	(524,526)	(2,440,390)	(1,718,279)	(7,235,997)
Ընդհանուր վարչական ծախսեր	10	(3,083,508)	(11,526,517)	(3,623,624)	(10,583,588)
Այլ գործառնական ծախսեր	10.1	(1,103,239)	(3,224,778)	(691,889)	(3,140,963)
Վերահսկվող միավորումներին մերթյումներից զուտ շահույթ/վնաս	11	32,975	96,282	12,841	(8,604)
Զեղչով ձեռքբերումից օգուտ		66,811	66,811	-	-
Շահույթ/ (վնաս) մինչև հարկումը		1,270,743	7,017,773	(86,880)	2,713,883
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	12	(280,894)	(1,526,948)	(141,544)	(954,079)
Ժամանակաշրջանի զուտ շահույթ		989,849	5,490,825	(228,424)	1,759,804
Այդ թվում՝		-	-	-	-
Մայր կազմակերպության բաժնեմաս		956,351	5,395,902	(306,181)	1,622,139
Չվերահսկվող բաժնեմաս		33,497	94,923	77,757	137,665
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-	-	-
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից		-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ		211,956	821,287	(55,932)	1,325,268
Դրամական հոսքերի հեջավորում		-	-	-	-
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումից օգուտներ		107,068	107,068	-	-
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ		(181,162)	(181,162)	(265,054)	(265,054)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		137,862	747,193	(320,986)	1,060,214
Համապարփակ ֆինանսական արդյունք		1,127,711	6,238,018	(549,410)	2,820,018
Այդ թվում՝		-	-	-	-
Մայր կազմակերպության բաժնեմաս		1,094,213	6,143,095	(627,167)	2,682,353
Չվերահսկվող բաժնեմաս		33,497	94,923	77,757	137,665

Բանկի գլխավոր գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



(Handwritten signatures)

Հ. Անդրեասյան

Ա. Հակոբյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15.01.2018թ.

Ենթահավելված 7
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

Հավելված 7
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի
թիվ 205 Ն որոշմամբ

Ֆինանսական Վիճակի Մասին Համախմբված Միջանկյալ Հաշվետվություն (ձև թիվ 7)

«31» Դեկտեմբերի 2017թ.

«ԱԿԲԱ-ԿՐԵԳԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ ք.Երևան Արամի 82-84
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (չստուգված) 31/12/17	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված) 31/12/16
1	Ակտիվներ			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	67,364,694	51,333,568
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ			
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	15,258,793	12,334,373
1.4	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական	15	27,426	24,974
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ	16	174,237,768	165,222,046
1.6	Ֆինանսական վարձակալություն	16	13,142,824	9,760,982
1.7	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	20,699,385	26,275,179
1.8	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	18		
1.9	Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում	19	382,467	263,639
1.10	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ			
1.11	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	17,364,944	15,328,248
1.12	Հետաձգված հարկային ակտիվներ	12		
1.13	Այլ ակտիվներ	22	2,545,147	2,728,834
	Ընդամենը՝ ակտիվներ		311,023,448	283,271,843
2	Պարտավորություններ			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	69,167,463	87,441,564
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	172,604,177	135,309,404
2.3	Բանկի կողմից բողոքված արժեթղթեր	25	2,971,160	
2.4	Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն	26	140,968	1,891
2.5	Վճարվելիք գումարներ	27	66,464	57,233
2.6	Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		833,453	54,596
2.7	Հետաձգված հարկային պարտավորություններ	12	711,725	798,954
2.8	Պահուստներ	34		
2.9	Այլ պարտավորություններ	29	4,310,652	3,013,106
	Ընդամենը՝ պարտավորություններ		250,806,062	226,676,748
3	Կապիտալ			
3.1	Կանոնադրական կապիտալ	28	30,000,000	30,000,000
3.2	Էմիսիոն եկամուտ			
3.3	Պահուստներ՝		9,901,087	9,072,803
3.3.1	Գլխավոր պահուստ		4,676,283	4,595,192
3.3.2	Վերագնահատման պահուստներ	28.1	5,224,804	4,477,611
3.4	Զբաղիված շահույթ (վնաս)		20,316,299	15,906,565
3.5	Կապիտալի այլ տարրեր			
	Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ		60,217,386	54,979,368
	Փոքրամասնության բաժնեմաս		-	1,615,727
	Ընդամենը՝ կապիտալ		60,217,386	56,595,095
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		311,023,448	283,271,843

Բանկի գլխավոր գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15.01.2018թ.



(Handwritten signatures)

Հ. Անդրեասյան

Ա. Հակոբյան

**Ենթահավելված 8
Հաստատված է**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հուլիսի 10-ի թիվ 127-Ն որոշմամբ

**Հավելված 8
Հաստատված է**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշմամբ

**Միջանկյալ Համախմբված Հաշվետվություն
Սեփական Կապիտալում Փոփոխությունների Մասին (ձև թիվ 8)**

«31» Դեկտեմբերի 2017թ.

«ԱԿԲԱ-ԿՐԵՐԻՏ ԱԳՐԻԿՈՒԲԱՆԿ» ՓԲԸ ք.Երևան Արամի 82-84
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(*հազար դրամ*)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Գնառկա արժեքի փոփոխություններ	Ստատուսային արժեքի փոփոխություններ	Փոփոխություններ անվանական արժեքի փոփոխությունների հետևանքով	Փոփոխություններ արժեքի փոփոխությունների հետևանքով	Կապիտալի արժեքի փոփոխություններ	Սեփական շահույթի փոփոխություններ	Սեփական շահույթի փոփոխություններ	Մյուս փոփոխություններ	Ընդամենը		
	Կանոնադրական կապիտալ	Հետ ցմված կապիտալ	Մյուս փոփոխություններ											
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Նախորդ Ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից ստորական) (I տրյուսակ)														
1. Մնացորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2016թ. (ստուգված)	30,000,000	0	30,000,000	0	4,595,192	0	427,278	0	2,990,119	14,221,477	0	52,234,066	1,478,062	53,712,128
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը												0		
10. Վերահաշվարկված մնացորդը	30,000,000		30,000,000	0	4,595,192		427,278		2,990,119	14,221,477		52,234,066	1,478,062	53,712,128
12. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնետոմսերի) գծով, այդ թվում՝											0			-
12.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում												0		-
12.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ ցմված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնետոմսերի, փայերի) հաշվին												0		-
13. Համապարփակ եկամուտ							1,060,214			1,685,088		2,745,302	137,665	2,882,967
14. Շահութաբաժիններ												0		-
15. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝												0		-
15.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում												0		-
16. Ներքին շարժեր, այդ թվում՝	0	0	0	0	0	0	-	-	-	-	-	0	-	-
16.1. Մասնաձեռններ գլխավոր պահուստից												0		-
16.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում												0		-
16.3. Էմիսիոն վնասի ծածկում												0		-
16.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում												0		-
16.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր												0		-
Փոքրամասնության բաժնեմաս												0		-
17. Մնացորդ միջանկյալ հաշվառու ժամանակաշրջանի վերջում առ 01 հունվարի 2017թ.	30,000,000	0	30,000,000	0	4,595,192	0	1,487,492	0	2,990,119	15,906,565	0	54,979,368	1,615,727	56,595,095

Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)														
1. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2017թ. (ստուգված)	30,000,000	0	30,000,000	0	4,595,192	0	1,487,492	0	2,990,119	15,906,565	0	54,979,368	1,615,727	56,595,095
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը													0	
10. Վերահաշվարկված մնացորդը	30,000,000	0	30,000,000	0	4,595,192	0	1,487,492	0	2,990,119	15,906,565	0	54,979,368	1,615,727	56,595,095
12. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝												0		-
12.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում												0		-
12.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին												0		-
13. Համապարփակ եկամուտ					0		661,540		85,653	5,395,902		6,143,095	94,923	6,238,018
14. Շահութաբաժիններ										(1,000,000)		(1,000,000)		(1,000,000)
15. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազացում), այդ թվում՝										94,923		94,923	(1,710,650)	(1,615,727)
15.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում												0		-
16. Ներքին շարժեր, այդ թվում՝	0	0	0	0	81,091	0	0	0	-	-81,091	0	-		-
16.1. Մասնաճանաչումներ գլխավոր պահուստին					81,091					(81,091)		0		-
16.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում												0		-
16.3. Էմիսիոն վնասի ծածկում												0		-
16.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում												-		-
16.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր												0	-	-
Փոքրամասնության բաժնեմաս					0							0	-	-
17. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 01 հունվարի 2018թ. (ստուգված)	30,000,000	0	30,000,000	0	4,676,283	0	2,149,032	0	3,075,772	20,316,299	0	60,217,386	-	60,217,386

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15.01.2018թ.

ԿՏ

Բանկի գլխավոր գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Handwritten signature in blue ink.

Հ. Անդրեասյան

Ա. Հակոբյան

Գրամական Միջոցների Հոսքերի Մասին
Համախմբված Միջանկյալ Հաշվետվություն (ձև թիվ 9)
«31» Դեկտեմբերի 2017թ.

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ ք.Երևան Արամի 82-84
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություն	Նախորդ ժամանակաշրջան 31/12/16	Հաշվետու ժամանակաշրջան 31/12/17
1. Գրամական հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
Գրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		15,418,617	17,761,164
Ստացված տոկոսներ		31,815,260	32,436,605
Վճարված տոկոսներ		(13,897,053)	(14,210,441)
Ստացված կոմիսիոն գումարներ		3,247,973	3,905,102
Վճարված կոմիսիոն գումարներ		(1,640,339)	(1,647,715)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)		236,009	219,108
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)		1,285,755	1,436,425
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		3,557,050	3,845,556
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(8,009,897)	(7,397,956)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(1,176,141)	(825,520)
Գրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		(7,675,068)	11,385,758
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)		(19,675,203)	(7,917,499)
այդ թվում՝ վարկերի և փոխառությունների նվազում/ (ավելացում)		(18,139,722)	(8,414,627)
առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		(24,990)	5,318,080
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում)		(289,977)	(2,373,729)
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)		(1,220,515)	(2,447,223)
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		12,000,135	19,303,257
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)		14,220,220	25,954,328
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		(2,220,085)	(6,651,071)
Չուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		7,743,549	29,146,922
Վճարված շահութահարկ		(13,159)	(724,634)
Չուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		7,730,390	28,422,288
2. Գրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)			
Այլ անձանց կամոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)			
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		(338,515)	(257,565)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,242,790)	(1,596,160)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		3,480	27,965
Գրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից			
Չուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		(1,577,825)	(1,825,760)
3. Գրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		x	x
Վճարված շահաբաժիններ			(1,000,000)
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(4,636,622)	(3,286,770)
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(2,662,463)	(1,397,786)
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)		2,579,131	(9,202,381)
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)			2,920,500
Բաժնետերերի ներդրումները կամոնադրական կապիտալում			
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)			
Գրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից			
Չուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		(4,719,954)	(11,966,437)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(26,536)	125,952
Գրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		1,406,075	14,756,043
Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	13_2	54,169,788	55,575,863
Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	13_2	55,575,863	70,331,906

Բանկի գլխավոր գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15.01.2018թ.



(Handwritten signatures)

Հ. Անդրեասյան

Ա. Հակոբյան

Հավելված 2
 Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի (եռամսյակային)

ՀՐԱՊԱՐԱՎՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ
 (համախմբված)

Բանկի անվանումը «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ 22000
 Ամսաթիվը 01.10.2017 31.12.2017
 (հազ. դրամ)

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը հաշվարկված բանկի համար	Նորմատիվի փաստացի մեծությունը հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4	5
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	30,000,000	30,000,000	50,000	խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	51,384,024	54,836,956	30,000,000	խախտում առկա չէ
Ն ₁ Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	19.15%	19.35%	12%	խախտում առկա չէ
Ն ₂ ¹ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	29.43%	28.37%	15%	խախտում առկա չէ
Ն ₂ ² Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցախահնց պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	179.19%	178.65%	60%	խախտում առկա չէ
Ն ₃ ¹ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	14.47%	13.55%	20%	խախտում առկա չէ
Ն ₃ ² Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	14.47%	13.55%	500%	խախտում առկա չէ
Ն ₄ ¹ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	1.08%	1.01%	5%	խախտում առկա չէ
Ն ₄ ² Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	6.87%	6.43%	20%	խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը ՀՀ դրամով			2% 18%	խախտում առկա չէ
Արտարժույթային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը	1.50%	1.86%	10%	խախտում առկա չէ
Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը				
ԱՄՆ դոլարով	1.51%	1.82%	7%	խախտում առկա չէ
Եվրոյով	-	-	7%	խախտում առկա չէ
Ռուսական ռուբլով	-	-	7%	խախտում առկա չէ
Այլ	x	x	x	խախտում առկա չէ

Աշխատողների թվաքանակը 31/12/17թ. -ի դրությամբ 1385 է:

Բանկի գլխավոր գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Handwritten signatures in blue ink.

Հ. Անդրեսայան

Ա. Հակոբյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15.01.18թ.

Վ.Տ.